

Ի. Լեզայան

ՈՐԱԿԱԿԱՆ ԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԼԵԶՎԻ ՄԵՋ*

Սովետական լեզվաբանության մեջ վերջին երկու տարիները ընթացքում ուղադրության կենտրոնում է գտնվում լեզվի զարգացման օրինաչափությունների պրոբլեմը: Եվ այդ պատահական չէ: Իր հանճարեղ լեզվաբանական աշխատությունների մեջ ընկեր Ստալինը ցույց է տվել, որ լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկը լեզվի զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունն է: Ընկեր Ստալինը, միաժամանակ, խորապես վերլուծելով լեզվի առանձնահատկությունները, բացահայտել է լեզվի զարգացման դիալեկտիկական ու, դրանով իսկ ստեղծագործական մարքսիզմի դիրքերից ելնելով՝ տվել տեսական այն սկզբունքները, որոնց վրա հիմնված՝ սովետական լեզվաբանությունը պետք է խոր գիտական վերլուծություններով ուսումնասիրի առանձին լեզուների զարգացման կոնկրետ օրենքները: Ելնելով ստալինյան հանճարեղ դրույթներից, մենք փորձում ենք հայերենի պատմության տվյալների հիման վրա ցույց տալ, թե ինչպես է ընթանում լեզվի զարգացումը: Բայց նախքան այդ հարցին անցնելը, պարզենք, թե ինչ ենք հասկանում լեզվի զարգացում ասելով:

Ինուրժուակսն լեզվաբանության մեջ ընդհանուր կարծիք: ! ալի, թե լեզվի զարգացումը նրա ձևական փոփոխություններն են, թե յուրաքանչյուր լեզու ժամանակի ընթացքում կրում է ձևական փոփոխություններ, որոնք հենց հանդիսանում են լեզվի զարգացումը: Այս կարծիքը ճիշտ չէ: Այն աչքաթող է անում լեզվի բոլոր մյուս կողմերը (բառային կազմ, բառիմաստ, քերականական կարգեր և այլն) և նկատի է առնում միայն ձևերի փոփոխությունը: Իհարկե, լեզվական ձևերի փոփոխությունը կարևոր դեր է կատարում լեզվի մի որակից մի նոր որակի անցնելու պրոցեսում: Բայց դա դեռ չի նշանակում, թե նա ամեն ինչ է: Լեզվի զարգացման, նրա մի որակական վիճակից մի նոր որակական վիճակի անցման պրոցեսում ավելի հիմնական ու վճռական դեր է կատարում բառային կազմի և քերականական իմաստների (և ոչ միայն ձևերի) փոփոխությունը:

Ելնելով հենց այն սխալ գրույթից, թե լեզվի զարգացումը լոկ ձևերի փոփոխություն է, բուրժուական լեզվաբանությունը դեռևս անցյալ դարում առաջ քաշեց սնանկ մի տեսություն, որի համաձայն լեզվի զարգացումը, իբրև թե, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ ձևաբանական մի տիպից մյուսին անցնելը: Հայտնի է, որ լեզուները, ըստ նրանց մեջ օգտագործվող ձևաբանական միջոցների, բաժանվում են երեք տիպի՝ անջատական, կցական և թեքական, որին ոմանք ավելացնում են նաև չորրորդ՝ ներմարմնավորյալ տիպը:

Հեղուների ձևաբանական այս երեք կամ չորս կարգերը նկատի ունենալով, բուրժուական լեզվաբանները կամենում էին դրանցով որոշել լեզվի զար-

* Ձեկուցված է Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Հասարակական գիտ. բաժանմունքի 1952 թ. հունիսի 20-ի նիստում, նվիրված Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հրապարակման երկրորդ տարեդարձին:

զացման հաջորդական աստիճանները: Այսպես, օրինակ, Վիլհելմ ֆոն Հումբոլդտը այն գրույթը առաջ քաշեց, թե իբր այդ երեք տիպերից անջատականը ներկայացնում է լեզվի զարգացման ստորին աստիճանը, կցականը՝ միջին աստիճանը, իսկ թեքականը՝ ամենարժեք աստիճանը: Հումբոլդտի այս հակապատմական «տեսությունը» ընդունեցին այնուհետև Ավգուստ Շլյախերը և շատ ուրիշները: Ոմանք փորձում էին նույնիսկ այդ տարբեր ձևարանական տիպերը կապել ժողովուրդների տնտեսական ու հասարակական զարգացման հետ: Մաքս Մյուլլերը, օրինակ, անջատական տիպը կապում էր հասարակության «ցեղային կազմակերպության շրջանի» հետ, կցականը՝ բուլվարության հետ, իսկ թեքականը՝ պետականության հասած, «զարգացած կազմակերպության» հետ: Մյուս կողմից, համարելով այդ տիպերը զարգացման հաջորդական աստիճաններ, բուրժուական լեզվարանները փորձում էին դրանցով որոշել նաև մտածողության զարգացման աստիճանը: Նույն Հումբոլդտը գտնում էր, որ զարգացած մտածողությունը կարող է արտահայտվել իբրև թե միայն թեքական տիպի լեզվով, և դրանից էլ եզրակացնում էր, որ ոչ թեքական լեզուներով խոսող ժողովուրդների մտածողությունը գտնվում է զարգացման ցածր աստիճանի վրա: Այս հակադիտական տեսակետը առանձնապես մեծ եռանդով են քարոզում ժամանակակից ամերիկա-անգլիական իմպերիալիզմի կամակատար գրչակները, որոնք լեզուները կառուցվածքը մտածողության ոչ միայն զարգացման, այլև «մտածողության ունակության չափանիշ» են համարում:

Հումբոլդտի այդ սխալ, իդեալիստական տեսությունն իր ժամանակին ջախջախիչ քննադատության է ենթարկել ոուս մեծ ուսուցիչ-դեմոկրատ Ն. Գ. Չերնիշևսկին: Խոսելով լեզուների ձևարանական դասակարգման մասին ու քննադատելով այդ տիպերի հաջորդականության սխալ տեսությունը, Չերնիշևսկին մերկացնում է Հումբոլդտի իդեալիստական գրույթի ամբողջ սխալությունը: «Երբ հաստատվեց լեզուների բաժանումը անջատականի, կցականի և թեքականի, — ասում է Չերնիշևսկին, — լեզվարանները հիացան արմատների թեքականությամբ՝ արիական՝ լեզուներում: Շատերը մինչև այժմ էլ այս առանձնահատկության մասին ցնծությամբ են խոսում: Լավ է, թե վատ, բերականական ձևերի կազմության թեքական միջոցը ինքնին, — այս մասին կարելի է մտածել այնպես, ով ինչպես ուզում է: Դա կլինի այնպիսի հարց, ինչպես ասենք՝ շիկահերը, թե՛ թխահերն է ավելի գեղեցիկ. երբ դրանց գեղեցկության մասին դատում են օրիորդները, շատ հետաքրքրական է լինում խոսակցությունը վարող օրիորդների համար և կարող է, իբրև երիտասարդ ուղեղների մարզանք, արժանանալ պատկառելի տարիքի մարդկանց հավանությանը, եթե իրենք՝ օրիորդները հիշեն, որ իրենց կողմից վճռվող հարցը փոքր ինչ հիմարավուն է»¹:

Չերնիշևսկին քննադատում է այն գրույթը, թե իբր այդ երեք տիպերը մտածողության զարգացման չափանիշն են, և ցույց է տալիս, որ լեզուների ձևարանական դասակարգումը ունի գործնական նշանակություն, նու չի կարող զարգացման աստիճանի չափանիշը լինել: Իբրև այդպիսի չափանիշ նա ձիշտ կերպով համարում է լեզվի բառապաշարի հարստությունը. «...Շատ հաճախ լեզվական տարբերություններին տալիս են տեսական նշանակություն, երևա-

¹ Անգլալ զարուժ հնգիւոպուկան րնտանիքը կոչում էին արիական:

² Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, 1950, т. X, стр. 845-846.

կայում են, թե քերականական առանձնահատկություններով կարելի է որոշել ժողովրդի մտավոր որակի առանձնահատկությունները: Սա դատարկ ֆանտազիա է: ...Լեզուների միջև էական տարբերությունն է կազմում միայն բառապաշարի հարստությունը կամ աղքատությունը: Իսկ բառապաշարի կազմը համապատասխանում է ժողովրդի գիտելիքներին նրանով, որ վկայում է նրա գիտելիքների մասին, նրա կրթվածության աստիճանի մասին, նրա ամենօրյա զբաղմունքների ու կենսաձևի մասին և մասամբ ուրիշ ժողովուրդների հետ ունեցած նրա հարաբերությունների մասին»¹:

Ինչպես տեսնում ենք, Չերնիշևսկին դեռ իր ժամանակին միանգամայն ճիշտ կերպով է քննադատել բուրժուական իդեալիստական սնանկ տեսությունը լեզվական տիպերի՝ որպես լեզվի ու մտածողության զարգացման հաջորդական աստիճանների մասին: Հիրավի, լեզուների այդ ձևաբանական տիպերը չեն կարող չափանիշ լինել ո՛չ լեզվի, ո՛չ էլ մտածողության զարգացման աստիճանը որոշելու համար: Հայտնի է, որ միևնույն մտածողությունը, միևնույն բովանդակությունը կարող է արտահայտվել քերականական տարբեր ձևերով ու միջոցներով. ուստի և տարբեր քերականական միջոցների օգտագործմամբ որոշվող այդ տարբեր տիպերը մտածողության «զարգացած» կամ «անզարգացած» լինելու չափանիշը չեն կարող դառնալ: Այնուհետև, բուրժուական էլ ճիշտ չէ, թե ձևաբանական այդ տիպերը հաջորդական աստիճաններ են լեզվի զարգացման մեջ: Լեզուների պատմությունից գիտենք, որ ինչպես կցական լեզուն իր զարգացման ընթացքում կարող է հանդիսանալ թեքականության, այնպես էլ թեքական տիպի լեզուն կարող է զարգանալ դեպի կցականություն: Օրինակ՝ հին անգլերենը թեքական լեզու է եղել, իսկ ժամանակակից անգլերենը կցական է՝ անջատականության տարրերով: Այդպես էլ, հին հայերենը՝ թեքական, ժամանակակից հայերենը՝ կցական և այլն:

Վերջապես, լեզվի զարգացումը անպայմանորեն չի զուգակցվում նրա ձևաբանական տիպերի փոփոխությամբ: Թեքական տիպի լատիներենի հիմքի վրա զարգացած իտալերենը, ֆրանսերենը և այլ նորալատին լեզուներ կցականության են հանգել: Հակառակ երևույթն է դրսևորում ռուսերենը, որ մնացել է թեքական տիպի, ինչպիսին էր հին ռուսերենը: Իսկ սա նշանակում է, որ չի կարելի այդ երեք կամ շորս տիպերից որևէ մեկը նախնական, անզարգացած աստիճանի, իսկ մյուսը զարգացման բարձր աստիճանի արտահայտություն համարել: Այն ձևաբանական տիպը, որ տվյալ լեզվի պատմության մեջ կարող է հանդես գալ իբրև այդ լեզվի առավել զարգացած վիճակի արտահայտություն, մի ուրիշ լեզվի համար կարող է բուրժուական էլ այդպիսին չլինել: Գերմանական ճյուղին պատկանող անգլերեն լեզուն իր զարգացման ընթացքում թեքականությունից անցել է կցականության և նույնիսկ ձեռք բերել անջատականության որոշ տարրեր. այս կառուցվածքը՝ կցականությունը անջատականության որոշ տարրերով, այն լավագույնն է, որին հասել է անգլերենը իր զարգացման ողջ պատմության ընթացքում: Նույն գերմանական ճյուղին պատկանող գերմաներենը իր զարգացման ընթացքում պահպանել է հին վերին գերմաներենի թեքական կառուցվածքը և, հետևաբար, դա էլ այն լավագույնն է, որ համապատասխանում է գերմաներենի զարգացման ողջ ընթացքին: Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ լեզուն ունի իր զարգացման ներքին օրենքներ:

¹ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, 1950, т. X, стр. 845—846.

Լեզվի վարդապետական ընդհանուր օրինաչափությունները իրենց կոնկրետ դրսևորումներն են ստանում կոնկրետ լեզուներում. այն օրենքները, որոնք գործում են տվյալ լեզվի վարդապետական աշխարհում, կարող են չգործել ոչ միայն ուրիշ լեզուներում, այլև նույն լեզվի վարդապետական մի այլ փուլում: Յուրաքանչյուր լեզու ունի վարդապետական իր տնտեսություններ: Ինչպես չի կարելի մի լեզվի վարդապետական ներքին օրենքները մեխանիկորեն տարածել մյուս լեզուների վրա, այնպես էլ չի կարելի մտածել, որ եթե մի լեզվի վարդապետական հանգում է նրա ձևաբանական կառուցվածքի փոփոխությանը, ապա նույնը պետք է կատարվի նաև մյուս լեզուների հետ, կամ եթե մեկի ձևաբանական կառուցվածքը նույն տիպի է պահպանում, ապա բոլոր լեզուներն էլ պետք է այդպես լինեն: Նույնը կարելի է ցույց տալ նաև մի լեզվի բարբառների օրինակով. ժամանակակից հայերենում ունենք հարկադրականի պիտի ասեմ, պիտի ասես և այլն ձևերը, շատ բարբառներ նույնպես ունեն այդ անալիտիկ ձևը. բայց կան բարբառներ էլ, որ այդ ձևը դարձրել են բասեմ, բասես և այլն: Եթե այս բարբառների համար այդ ձևերն են այն լավագույնը, որին հանդել են նրանք իրենց վարդապետական ընթացքում, ապա մյուս բարբառների, ինչպես և ժամանակակից հայերենի համար այդ լավագույնը պիտի ասես, պիտի ասես և նման ձևերն են:

Այս բոլորից հետևում է, որ՝

ա) ձևաբանական տիպերը չեն ներկայացնում լեզվի վարդապետական հաջորդական աստիճանները.

բ) այս տիպերի հաջորդականությունը պարտադիր երևույթ չէ լեզուների համար. ինչպես և հաջորդականության կարգը նույնը չէ. մի լեզու կարող է կցականից թեքականին անցնել, մի ուրիշը՝ թեքականից կցականին:

Չնայած այս բոլորին, Մառն ու նրա հետևորդները, — որոնք մարքսիզմի սնունդից էին հանդես գալիս և հավակնում էին լուծել լեզվաբանության հարցերը մարքսիստորեն, բայց իրականում գեղեցկացնում էին մարքսիզմը, — որդեգրեցին հումբոլդտյան-մյուլլերյան դրույթը՝ լեզվական տիպերի հաջորդականության մասին: Հիմնելով իր այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքը», Մառը մեծագույն ֆրազներով առաջարկեց իր ուրույն տեսակետը լեզվի վարդապետական մասին: Նա ժխտեց լեզուների ծննդաբանական դասակարգումը և առաջ քաշեց այն սխալ գրույթը, թե լեզուների միջև եղած ընդհանրությունները արդյունք են ոչ թե նրանց ծագումաբանական ընդհանրության, այլ նրանց վարդապետական միևնույն ստադիայի: Նա, ելնելով լեզվի վերնաշենք լինելու իր ոչ մարքսիստական ֆորմուլայից, գտնում էր, որ հասարակության կյանքում տեղի ունեցող ռևոլյուցիոն անցումներին համապատասխան լեզուն էլ ռևոլյուցիոն անցում է կատարում հին որակից նոր որակի՝ պայթյունի միջոցով: Սրանից էլ նա ելրակացնում է, թե իբրև հասարակական յուրաքանչյուր ֆորմացիա ունի իրեն հատուկ լեզվական ստադիան, որ արտահայտվում է լեզվի բերականական-ձևաբանական կառուցվածքով: Ձևաբանական երեք տիպերը Մառի համար ուղղակի լեզվի ստադիալ տիպերն էին. նրանցից յուրաքանչյուրն իբրև թե ներկայացնում է լեզվի վարդապետական մի աստիճանը:

Դժվար չէ նկատել, որ այս դրույթն ըստ էության նույնանում է Հումբոլդտի և Մաքս Մյուլլերի սխալ տեսակետի հետ: Սակայն Մառը իրեն հատուկ ֆրազաբանությամբ ներկայացնում էր այդ իբրև նորություն, իբրև լեզվի վարդապետական մարքսիստական ըմբռնում: Իայց այդ դեռ բոլորը չէ. պտնելով, որ

այդ ձևաբանական տիպերը հանդիսանում են լեզվի զարգացման ստադիաները կամ աստիճանները, նա այն իդեալիստական տեսակետը առաջ քաշեց, թե այդ տիպերն արտահայտում են նաև մտածողության զարգացման աստիճանները: Մառի հետևորդները, որոնք կուրորեն ընդունում էին նրա յուրաքանչյուր ֆորմուլան, այս հարցում էլ հետևեցին նրան և ստադիալականության տեսությունը հռչակեցին որպես լեզվաբանության նվաճում: Սակայն այդ հայտարարություններով հանդերձ նրանք, այնուամենայնիվ, նկատում էին, որ լեզվական ստադիաների՝ ամորֆ, անջատական, կցական (հաբեթական), թեքական (պրոմեթեդյուն)՝ մառյան սխեման չի համապատասխանում կոնկրետ լեզուների պատմությանը և, մանավանդ, չի արդարանում հասարակական ֆորմացիաների հաջորդականության հետ կապված լեզվական ստադիաների հաջորդականությունը: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ, նրանք տարբեր ուղղություններով սկսեցին «զարգացնել» ստադիալականության մառյան տեսությունը: Ակադ. Ի. Բ. Մեշչանինովը, որ մինչև 30-ական թվականներն ընդունում էր ստադիալականության մառյան սխեման, հետագայում առաջարկեց իր սխեման, հիմնված նախադասության տարբեր կառուցվածքների վրա: Այդ սխեման իր վերջնական ձևակերպումն է ստացել նրա «Члены предложения и части речи» աշխատության մեջ: Ակադ. Ի. Բ. Մեշչանինովի այդ սխեման ընդունեցին մառականներից շատերը, ինչպես՝ պրոֆ. Ս. Դ. Կացենկոն, Ա. Պ. Ռիֆտինը, Ա. Ա. Խուլոգովիչը և ուրիշները: Ոմանք, իբրև ավելի ուղղափառ մառականներ, շարունակում էին ընդունել Մառի ստադիալ սխեման՝ հիմնված լեզվի ձևաբանական կառուցվածքի վրա և կապելով դրանք հասարակական ֆորմացիաների հետ: Այդպես էին վարվում պրոֆեսորներ Ն. Ֆ. Յակովլևը, Վ. Կ. Նիկոլսկին, Ա. Ս. Ղարիբյանը և ուրիշները: Վերջապես, տողերիս գրողն էլ, ընդունելով դարձյալ մառյան ստադիալականության տեսությունը, գտնում էր, թե ստադիաների որոշման հիմքը պետք է համարել միաժամանակ և՛ հնչյունական համակարգը, և՛ իմաստաբանությունը, և՛ ձևաբանությունը, և՛ նախադասության կառուցվածքը¹:

Այսպիսով՝ ստադիալականության մառյան տեսության «զարգացումը» հասավ այն բանին, որ ստեղծվեց կատարյալ խառնաշփոթություն լեզվի զարգացման հարցում, իսկ ստադիաների հարցը այդպես էլ լուծում չստացավ, և իրենք՝ ստադիալականության ամենաջերմ պաշտպաններն անգամ ստիպված էին փոստովանել, որ ստադիալականության տեսությունը մեռյալ կետի վրա է մնացել: Այլ կերպ լինել չէր էլ կարող: Ստադիալականության տեսությունն իր էությանմբ իսկ սխալ էր. պարզ է, որ այդպիսի սխալ տեսությունը չէր կարող որևէ դրական բան տալ լեզվաբանությանը:

Ստադիալականության տեսության հիմնական սխալները հետևյալներն են.

1. Լեզվի ձևաբանական կառուցվածքները որպես մտածողության և, մանավանդ, գաղափարախոսության արտահայտություն համարելը: Դրանով լեզվի ձևաբանական կառուցվածքը նույնացվում էր մտածողության հետ:

2. Լեզվի ձևաբանական յուրաքանչյուր տիպը հասարակական ֆորմացիաներից որևէ մեկի հետ կապելը:

3. Լեզվի որակական անցումները պայթյուններով բացատրելը:

Բացահայտելով ստադիալականության տեսության սնանկությունը, ընկեր Ստալինը գրում է. «Ասում են, որ լեզվի ստադիալ զարգացման թեորիան

¹ Էդ. Ա. զ ա յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1949, էջ 243-244:

մարքսիստական թեորիա է, որովհետև նա ընդունում է հանկարծակի պայ-
թյունների անհրաժեշտությունը, որպես լեզվի հին որակից նոր որակի անց-
նելու պայման: Դա, իհարկե, ճիշտ չէ, որովհետև դժվար է որևէ մարքսիս-
տական բան դանել այդ թեորիայի մեջ: Եվ եթե ստադիալականության թեո-
րիան իրոք հանկարծակի պայթյուններ է ընդունում լեզվի զարգացման պաս-
մության մեջ, ապա, ավելի վատ նրա համար: Մարքսիզմը չի ընդունում հան-
կարծակի պայթյուններ լեզվի զարգացման մեջ, գոյություն ունեցող լեզվի
հանկարծակի մահացում և նոր լեզվի հանկարծակի կառուցում»¹:

Մերկացնելով լեզվի զարգացման մասին Ն. Յա. Մառի «պայթյունների
տեսության» ոչ մարքսիստական էությունը, ընկեր Ստալինը բացահայտեց
լեզվի զարգացման դիալեկտիկան: Ըր հանձարեղ աշխատության մեջ, բացա-
ռիկ խորությամբ վերլուծելով լեզվի հատկանիշները, ընկեր Ստալինը ցույց
տվեց, որ լեզվի զարգացումը տեղի է ունենում ոչ թե հանկարծակի պայթյուն-
ների միջոցով, այլ լեզվի գոյություն ունեցող քերականական կանոնների
աստիճանական, ևրկաբ դառնի ընթացքում կատարվող փոփոխություներով,
սւր կանոնների առաջացմամբ ու հների վերացմամբ և բառային կազմի հարս-
տացմամբ ու բազմակողմանի դարձնելով: Այդ փոփոխությունները տեղի են
ունենում ոչ միանգամից, ոչ հանկարծակի կերպով և ոչ էլ հավասար տեմ-
պով: Նրանք տեղի են ունենում աննկատելի կերպով, երկար ժամանակի
ընթացքում, երբեմն արագ, երբեմն դանդաղ: Ուստի և լեզվի զարգացումը,
նրա «անցումը հին որակից նոր որակի տեղի է ունենում ոչ թե պայթյունի
միջոցով, ոչ թե գոյություն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորն ստեղծելու
միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով,
հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»²:

Արդ, ելնելով ստալինյան այդ հստակ դրույթից՝ անհրաժեշտ է սլարզել,
թ. ինչպես է տեղի ունենում հենց նոր որակի տարրերի աստիճանական կու-
տակումը և հին որակի տարրերի մահացումը:

Այդ հարցին ընկեր Ստալինը պատասխանում է միանգամայն պարզ ու
որոշակի կերպով. «Դարաշրջանների ընթացքում մշակված և լեզվի մեջ միս ու
արյուն դարձած քերականական կառուցվածքը փոփոխվում է է՛լ ավելի դան-
դաղ, քան բառային հիմնական ֆունդը: Նա իհարկե, ժամանակի ընթացքում
փոփոխություններ կրում է, կատաղելագործվում է, բարելավում և ճշգրտում
իր կանոնները, հարստանում է նոր կանոններով, սակայն քերականական
կառուցվածքի հիմքերը պահպանվում են շատ երկար ժամանակի ընթացքում,
որովհետև դրանք, ինչպես ցույց է տալիս պատմությունը, կարող են հասարա-
կությանը հաջողությամբ սպասարկել մի շարք դարաշրջանների ընթացքում»³:

Լեզվի քերականական կառուցվածքի մեջ տեղի ունեցող այդ փոփոխու-
թյունները, կատարելագործումը, կանոնների ճշգրտումն ու նոր կանոններով
հարստանալը տեղի են ունենում երկու ուղղությամբ, արտահայտվում երկու
կարգի փոփոխությունների մեջ՝ ևրականական իմաստների փոփոխությու-
նելու և ևրականական ձևերի փոփոխությունների մեջ: Քննենք սրանցից յու-
րաքանչյուրն առանձին-առանձին:

Հայտնի է, որ ոչ միայն տարրեր լեզուների մեջ, այլև միևնույն լեզվի

¹ Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, (96) — 62:

² Նույն տեղում, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 56 — 57:

պատմության տարբեր շրջաններում տարբեր քերականական իմաստներ կարող են լինել: Իսկ եթե այդպես է, ապա այդ տարբեր քերականական իմաստներն էլ իրենց քերականական արտահայտությունը կամ ձևն են ունենում, որով և լեզվի մեջ առաջ են դալիս համապատասխան քերականական կանոնները: Սրանից ինքնին բխում է այն, որ եթե տվյալ լեզվի մեջ, նրա պատմության մի շրջանում եղել է որևէ քերականական իմաստ իր համապատասխան ձևավորմամբ, իսկ հետագայում այդ իմաստը լեզվից դուրս է եկել, ապա դուրս է եկել նաև համապատասխան քերականական կանոնը: Կամ եթե լեզվի պատմության տվյալ շրջանում առաջացել են նոր քերականական իմաստներ, որոնք նախկինում չեն եղել, ապա այդ նոր իմաստներն էլ կարող են ստանալ իրենց քերականական ձևավորումը, որով և քերականության մեջ կառաջանան նոր կանոններ:

Ի՞նչ են օրինակներ այս երկու դեպքերի համար:

Ինչպես շատ լեզուների, այնպես էլ հնդեվրոպական լեզուների մի զգալի մասին հատուկ է քերականական սեռը: Լեզվաբանությունը հաստատել է, որ նախապես բոլոր հնդեվրոպական լեզուներն էլ ունեցել են քերականական սեռ: Ըստ այդմ հայերենն էլ պետք է իր պատմություն վաղագույն շրջաններում ունեցած լիներ այդ: Իմ հայոց լեզվի պատմությունը հիմք է տալիս այս ենթադրությունը ճիշտ համարելու: Գրաբարի մեջ կան երևույթներ, որոնք կարելի է համարել քերականական սեռի հետքեր, օրինակ գրաբարում ի հայտ գող բառերը, իրենք ընդհանուր կանոն, ենթարկվում են ո հոլովման, բայց նրանց մի մասը ենթարկվում է ո անխառն հոլովման, ինչպես՝ հողի, հողույ, հեզուվ, հեզուց, որդի, որդույ, որդուվ, որդուց և այլն, իսկ մյուս մասը ենթարկվում է ո-ա խառն հոլովման, ինչպես՝ այրի, այրույ, այրեալ, այրեաց, լալի, մալույ, մաֆալ, մաֆեաց և այլն: Արդ, ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ նախապես անխառն ո հոլովման ենթարկվել են արական սեռի գոյականները, իսկ ո-ա խառն հոլովման՝ իգական սեռի գոյականները: Սակայն, հայերենը, հավանաբար տեղական լեզուների ազդեցությամբ, ժամանակի ընթացքում կորցրել է քերականական սեռը, և հոլովման մեջ էլ այդ տարբերությունն աստիճանաբար վերացել է: Հինգերորդ դարի մատենագրության մեջ ավանդված տվյալները հաստատում են, որ սեռերի կորուստը տեղի է ունեցել շատ վաղ ժամանակներում, և հինգերորդ դարում անգամ, որ ներկայացնում է մեր լեզվի գրավոր ավանդված ամենահին շրջանը, այլևս չէր պիտակցվում այդ կանոնը:

Կամ՝ ինչպես շատ ուրիշ լեզուներում, այնպես էլ հին ռուսերենում գոյություն ունեւ երկակի թիվը՝ յուր քերականական արտահայտությամբ, բայց ժամանակի ընթացքում երկակի թիվը անհետացել է, և նրա հետ անհետացել է նաև համապատասխան քերականական կանոնը, այն կանոնը, որի համաձայն կազմվում էր երկակի թվի ձևը: Վերջապես, լատինիերենում կար գոյականների երեք սեռ (արական, իգական, շեղոք), մինչդեռ ժամանակակից իտալերենում կա երկու սեռ (արական և իգական): Ժամանակի ընթացքում անհետացել են շեղոք սեռը և նրա ձևավորման քերականական կանոնը:

Սակայն սա երևույթի մի կողմն է միայն: Ինչպես ցույց է տալիս լեզուների պատմությունը, եթե ժամանակի ընթացքում լեզվից դուրս են գալիս որոշ քերականական իմաստներ, ապա դրան զուգընթաց տեղի է ունենում նաև հակառակ երևույթը, այսինքն՝ նրա մեջ առաջ են գալիս նաև որոշ նոր քե-

րականական իմաստներ, որոնք հնում չեն եղել, և ստանում են իրենց քերականական արտահայտությունը, այսինքն՝ առաջանում են նոր քերականական կարգեր, որով և լեզուն հարստանում է նոր քերականական կանոններով: Այսպես, օրինակ՝ գրաբարում գոյականների հոլովման մեջ ժամանակ ցույց տվող բառերի տարբերակում չկա: Նրանք հոլովվում են այն կանոններով, ինչ կանոններով հոլովվում են բոլոր մյուս գոյականները: Սակայն, ժամանակի ընթացքում այդ բառերը կազմում են ուրույն խումբ և հոլովվում Վա հոլովմամբ (օվՎա, տարՎա և այլն), որով և թե՛ նոր քերականական իմաստ է առաջանում մեր լեզվում (ժամանակ ցույց տվող բառերի ուրույն քերականական կարգը), և թե՛ նրա արտահայտման քերականական կանոնը: Գրաբարում չկար նաև գոյականների տարբերակումն ըստ անձի և իրի առումների: Ժամանակի ընթացքում մեր լեզվի մեջ առաջացել է այդ տարբերակումը, ստեղծվել է քերականական նոր իմաստ՝ անձի և իրի առման իմաստը, իսկ դրա արտահայտման համար էլ լեզվի մեջ ստեղծվել է այն քերականական կանոնը, որի համաձայն գոյականներն անձի առումով գործածվելիս հայցական հոլովում ձևավորվում են տրականի նման, իսկ իրի առումով գործածվելիս՝ ուղղականի նման: Հետևաբար՝ նոր քերականական իմաստների տառաջացումով ու նրանց քերականական ձևավորմամբ լեզուն հարստանում է նոր քերականական կանոններով:

Քերականական ձևերի փոփոխությամբ կատարվող քերականական կանոնների բարելավումն ու կատարելագործումը տեղի են ունենում հիմնականում երկու ճանապարհով: Առաջինն այն է, երբ ժամանակի ընթացքում փոփոխվում է տվյալ քերականական ձևի իմաստը, և գոյություն ունեցող ձևն արտահայտում է մի նոր իմաստ, իսկ նրա հին իմաստը կամ լեզվից դուրս է դալիս, կամ ստանում է իր արտահայտության նոր ձևը: Այսպես, օրինակ՝ գրաբարում ամենատարածված հոգնակերտ մասնիկն էր և-ն (ևսլսլսլ, սլզզիլ, ծառլ, տունլ և այլն), որին զուգընթաց սակավ գործածությամբ կային նաև -եառ (որեառ), -նի (ավագանի, ազատանի) և այլ հոգնակերտ մասնիկներ: Ժամանակի ընթացքում և մասնիկը, հոգնակերտ լինելով հանդերձ, դառնում է նաև գոյականակերտ, կազմելով այնպիսի գոյականներ, ինչպես՝ հունլ, հանլ և այլն, որոնք թեև նախապես հոգնակի ձևեր են եղել, բայց հետագայում աստիճանաբար զրկվել են հոգնակի իմաստից և դիտակցվել իբրև եզակի թվով գոյականներ: Այս բանին, անշուշտ, զարկ են տվել առանձնապես անեզական բառերը, ինչպես՝ երևանլ, հանցանլ և այլն, որոնք գրաբարում անգամ դիտակցվում էին իբրև եզակի և գործածվում էին մի կամ մեկ թվական որոշիչի հետ. օրինակ՝ երկու աղայցեն ի մի երկանս — «երկուսը մի երկանք են աղում»: «Վասն միոյ հանցանաց — «մեկ հանցանքի համար» և այլն:

Հենց այն հանգամանքը, որ և մասնիկն աստիճանաբար դիտակցվում է իբրև գոյականակերտ, տեղիք է տալիս նրա հոգնակիացնող իմաստի մթաղնման. եթե մի ժամանակ աչլ, ոտլ, ձեռլ, բերլ, տեսլ և այլ բազմաթիվ բառեր այդ ձևով հոգնակի էին, ապա ժամանակի ընթացքում դիտակցվում են սոսկ որպես գոյականներ՝ եզակի թվով, որ և բնականաբար շփոթություն է առաջ բերում հոգնակիի կազմության մեջ. մի շարք բառեր և վերջավորությամբ հոգնակի են, իսկ մի շարք բառեր էլ՝ եզակի: Բնականաբար տնհրաժեշտություն է ստեղծվում այդ շփոթության առաջն առնելու, մանավանդ,

որ և մասնիկը իր նոր իմաստով աստիճանաբար շատ ավելի մեծ գործածություն է ստանում: Ահա այդ շփոթությունից դուրս գալու համար լեզվի մեջ ղուգահեռաբար սկսում են գործածվել հոգնակիի նոր ձևեր: Այն մասնիկները, որոնք V—VII դարերի մատենագրության լեզվում խիստ սահմանափակ դործածություն ունեին, հետագայում աստիճանաբար տարածվում են, ավելի հաճախ գործածություն ստանում, այնպես որ, արդեն միջին դարերում առավել գործածական հոգնակերտ մասնիկներն են դառնում՝ -նի, -եր, -վի (-ուի), -ստան և այլն, իսկ V հոգնակերտի գործածությունը սահմանափակվում է միայն ձայնավորահանգ բառերով:

Սակայն այս էլ դրությունը չի փրկում. հոգնակերտ մասնիկների այդպիսի առատությունը ևս շփոթությանը վերջ չէր տալիս, մանավանդ, որ երբեմն հնարավոր չէր որոշակիորեն իմանալ, թե ո՞ր մասնիկը ի՞նչ դեպքում է գործածվում: Ուստի և կատարելագործման պրոցեսը դեռևս շարունակվում է, մինչև որ այդ բոլոր մասնիկներից, իբրև հոգնակերտ, գրական լեզվում մնում են -եր (միավանկ բառերի համար) և -ներ (բաղմավանկ բառերի համար), մինչդեռ բարբառներում ընտրությունը տարբեր ընթացք է ստանում՝ որոշ տեղերում V-ի, որոշ տեղերում՝ -նի-ի, -եր-ի, իսկ ուրիշ տեղերում էլ -ստանի, -ի-ի կամ այլ մասնիկների գերակշիռ գործածությամբ:

Այս բոլորի արդյունքն այն է լինում, որ ժամանակակից հայերենում հոգնակիի կազմության նոր կանոններ են ստեղծվում՝ հին հայերենի կանոնների փոխարեն, իսկ հին հայերենի հոգնակերտ մասնիկը նոր քերականական իմաստ է ստանում, դառնալով բառակազմական մասնիկ, որով ժամանակակից հայերենը բառակազմության մեջ ևս նոր կանոն է ունենում:

Մի այլ օրինակ. գրաբարում բայի սահմանական եղանակը, հատկապես ներկայի և անցյալ անկատարի ձևերով, գործածվում էր նաև ըղձականի և պայմանականի իմաստով, որոնց համար առանձին ձևեր գոյություն չունեին: Ժամանակի ընթացքում ըղձական, պայմանական, ինչպես և հարկադրական եղանակների՝ որպես քերականական ուրույն իմաստների՝ զարգացումը և խոսողների կողմից նրանց գիտակցման ուժեղացումն այդ իմաստներն արտահայտելու քերականական ուրույն ձևերի առաջացման անհրաժեշտություն են ստեղծում: Հին հայերենի սահմանականի ձևը, որ հավասարապես գործածվում էր թե՛ սահմանական, թե՛ ըղձական, և թե՛ պայմանական եղանակների քերականական իմաստ արտահայտելու համար և հենց դրանով էլ տեղիք էր տալիս մտքի որոշ շփոթության, այդ անհրաժեշտության առկայության պայմաններում ստանում է որոշ կոնկրետացնող մասնիկներ: Իբրև ավելի ընդհանուր և անորոշ ձև, սահմանականի անփոփոխ ձևն աստիճանաբար հատկացվում է ըղձականին, իսկ սահմանականի, պայմանականի ու հարկադրականի համար ստեղծվում են առանձին մասնիկներ (-ում, կու-) կամ գործածվում են օժանդակ բառեր (պիտի, կամիւմ): Այսպիսով՝ միջին հայերենում արդեն աստիճանաբար առաջանում են այն ձևերը, որոնք հետագայում մեր ազգային լեզվի մեջ բայի խոնարհման հիմքն են կազմում (զրում եմ, կզրեմ, զրեմ, պիտի զրեմ, կամիւմ զրել, ի զրել եմ և այլն):

Նույնպես և կրավորական սեռը, որ գրաբարում բավականաչափ խառն և անորոշ վիճակ է ներկայացնում, ժամանակի ընթացքում իր կատարելագործմանն է հասնում կրավորականի վ մասնիկի առաջացումով, որով այժմ-

լան հայերենում բայական սեռերի տարբերակումը շատ պարզ ու որոշակի վիճակ է ներկայացնում:

Այս բոլորը, ինչպես տեսնում ենք, միաժամանակ և՛ փոփոխել են մեր լեզվում գոյություն ունեցած քերականական կանոնները, և՛ հարստացրել են լեզվի քերականությունը նորանոր կանոններով, և՛ բարելավել, կատարելադործել ու մշակել են արդեն գոյություն ունեցած կանոնները:

Այսպիսի երևույթ, սովորել կամ նվազ տրագ տեմպով, առավել կտամ նվազ չափերով տեղի է ունեցել նաև ուրիշ լեզուներում. այսպես՝ «ռուսաց լեզվում 11—12-րդ դարերից նշանակալից փոփոխության է ենթարկվել բայական կատեգորիաների ու ձևերի համակարգը, օրինակ՝ ձևավորվել է կերպի կատեգորիան, փոխվել է ժամանակի ու հղման կատեգորիայի կառուցվածքը, առաջացել է դերբայական կատեգորիան, և այլն: Ոչ նվազ էական փոփոխություններ են կատարվել անվան կատեգորիայի ու ձևերի համակարգում, օրինակ՝ անհետացել է ածականների կարճ ձևերի հոլովումը, այդ ձևերի շարահյուսական դերի փոփոխության կապակցությամբ, երկակի թվի անհետացման և եղակի ու հոգնակի թվի ձևերի առավել վերացական իմաստների զարգացման հետ սկսեց առաջանալ վիճակի հատուկ կատեգորիան, խիստ կերպով փոփոխվեցին ածական անունների քերականական հատկություններն ու նրանց ձևերը և այլն»¹:

Քերականական ձևերի փոփոխության երկրորդ ճանապարհը հնչյունափոխությունն է: Հայտնի է, որ ընդհանուր (պատմական) հնչյունափոխությունները ոչ միայն փոփոխում են առանձին հնչյուններ կամ հնչյունախմբեր, այլև փոփոխում ու զարգացնում են լեզվի արտասանական բազան: Այդ նշանակում է, թե նրանք ժամանակի ընթացքում փոփոխում են նաև լեզվի թե՛ բառերի ձևերը, և թե՛ քերականական ձևերը: Մյուս կողմից, զրուենք նաև, որ հնչյունական օրենքները իրարից առանձնացած երևույթներ են, այլ հաճախ մի հնչյունական օրենք կապված է մի շարք ուրիշ հնչյունական օրենքների հետ: Այսպես, օրինակ՝ եթե պատմական որևէ ժամանակաշրջանում տվյալ լեզվի մեջ նկատում ենք, ասենք, ք-ի օրինաչափ անցումը պ-ի, ապա մենք իրավացիորեն կարող ենք ենթադրել նաև դ, զ, ձ, ջ-ի անցումը տ, վ, ց, չ-ի: Այսինքն, եթե ձայնեղ պայթականներից մեկը օրինաչափորեն դառնում է խուլ, ապա պետք է, որ մյուսներն էլ այդ օրինաչափական անցումը կատարեն: Բայց միայն սրանով հնչյունափոխական շղթան չի վերջանում. ձայնեղների խլացումը բերում է անպատեհ նույնություններ ու շփոթություններ. բազր-ը, այդ հնչյունական օրենքով, դառնում է պատ և նույնանում արդեն գոյություն ունեցող պատ (СТЕНА) բառի հետ, զաբ-ը՝ կաբ, դատ-ը՝ տատ բառի հետ և այլն: Ուստի և ձայնեղների օրինաչափ խլացումը իր հետ բերում է նաև հակառակ օրինաչափությունը՝ խուլների ձայնեղացումը (պ > բ, տ > դ և այլն) կամ՝ շնչեղացում (պ > փ, տ > փ և այլն): Հենց այսպիսի երևույթ տեղի է ունեցել հայերեն բարբառներում: Իհարկե, այսպիսի երևույթը չի կարելի պարտադիր ու բացարձակ համարել, բայց ինչպես ցույց է տալիս լեզուների պատմությունը, հնչյունական օրենքների այդպիսի շաղկապվածությունը ամենասովորական երևույթներից մեկն է:

¹ Акад. В. В. Виноградов, Значение работ товарища Сталина для развития советского языкознания, М., 1950, стр. 12.

Այս բոլորը նկատի ունենալով, մենք կարող ենք ընդունել, որ լեզվի բերականական կառուցվածքի զարգացման մեջ զգալի դեր են խաղում հնչյունական փոփոխությունները: Հիմա, հնչյունական փոփոխությունները մեծ նշանակություն ունեն ոչ միայն սովորական լեզվի հնչյունական համակարգի զարգացման տեսակետից, այլև նրա ձևաբանության զարգացման ու կատարելագործման մեջ: Այլ կերպ լինել չի էլ կարող: Ինչպես ուսուցանում է բնական լեզվի հիմքն են կազմում նրա բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքը, իսկ բառերն ու քերականական արտահայտությունները նյութապես ձևավորվում են հնչյուններով: Հասկանալի է, որ եթե փոխվում են հնչյունները, ապա փոխվում են նաև լեզվի բառերի ձևերը և քերականական ձևերը: Այս բանը շատ ավելի ցայտուն կերպով է երևում բարբառների ուսումնասիրությամբ. մենք հայերեն բարբառներ ունենք, որոնք այնքան տարբեր են իրենց թե՛ բառային, թե՛ քերականական ձևերով, որ առաջին հայացքից թվում է, թե հայերեն չեն. այդպիսին է, օրինակ՝ Ագուլիսի բարբառը: Բայց բավական է փոքր ինչ ուշադրությամբ քննել այդ ձևերը, դրանք համապատասխան հնչյունական օրենքները, և մենք իսկույն ստիպված կլինենք հրաժարվել առաջին տպավորությունից և համարել դրանք նույնպիսի հայերեն բարբառներ, ինչպիսիք են բոլոր մյուս հայերեն բարբառները: Լեզու, օրինակ՝ Ագուլիսի բարբառում ունենք «մայս», «սայրիլ», «հայն» և բաղմամբով այդպիսի բառեր, որոնք կարծես թե հայերեն չեն. բայց հենց որ իմանանք, որ համապատասխան հնչյունական օրենքներով ինչ դարձել է այ, ապա հեշտությամբ կարող ենք իմանալ, որ դրանք ստացվել են հայերեն միս, սիրել, հին բառերից: Այստեղ մենք հիշեցինք միայն մի հնչյունական օրենք, որով այդ բառերն այդքան ձևափոխվել են, իսկ եթե բոլոր հնչյունական փոփոխությունները ի մի հավաքենք և քննենք նրանց առաջ բերած ձևափոխությունները, ապա կտեսնենք, որ Ագուլիսի բարբառի այդ ամբողջ տարբերությունների մի զգալի մասը արդյունք է հենց հնչյունական փոփոխությունների: Ծիշտ այսպիսի երևույթ ենք տեսնում նաև լեզվի պատմական զարգացման երկու տարբեր փուլերի համեմատության ժամանակ. հին հայերենում ունեցել ենք տուն, ձաւն, երես և այլն, որոնք արտասանվել են՝ տոուն, ձաուն, երես և այլն, իսկ այժմ արտասանվում են տուն, ձոն, յերես և այլն:

Բայց այս բոլոր օրինակները վերաբերում են միայն բառերին: Այժմ անցնենք քերականական ձևերին. հին հայերենում ունեինք ո հոլովումը (մարւոյ, գետոյ և այլն). ոյ վերջավորությունը, հնչյունական որոշ օրենքով, դարձել է ու և դրա հետևանքով ժամանակի ընթացքում մեր լեզվից անհետացել է ո հոլովումը, հետքեր թողնելով միայն քարացած ձևերում (սիրո, սգո և այլն), և ընդհակառակն մեծ գործածություն է ստացել ու հոլովումը, առանձնապես որպես բայի անորոշ դերբայի հատուկ հոլովում: Կամ թե չէ, դեռևս անցյալ դարում և նույնիսկ այս դարի առաջին երկու տասնամյակում բայի պայմանական եղանակի ժխտականը կազմվում էր անորոշ դերբայից (չեմ գրիլ, չեմ կարդալ, չէի գրիլ, չէի կարդալ և այլն): Սակայն ժամանակի ընթացքում անորոշի վերջահանգ լ-ն այդ ձևերում ընկել է, որով և ստացվել է գրի, կարդա դերբայական նոր ձևը (ժխտման դերբայ) և պայմանական եղանակի ժխտական խոնարհման նոր կանոնը: Նույնպես և՛ հրամայականի ժխտական խոնարհման եզակի երկրորդ դեմքը կազմվում էր անո-

բող դերբայից (մի՛ գրիլ, մի՛ կարդալ և այլն), բայց ժամանակի ընթացքում առաջին խոնարհման վերջահանգ լ-ն փոխվել է ր-ի, իսկ երկրորդ խոնարհման լ-ն՝ ընկել, որով և ստացել ենք մի՛ գրիւ, մի՛ կարդա և այլն ձևերը, այսինքն՝ դարձյալ նոր ձևեր ու նոր կանոններ։ Իսկ դրանով մեր լեզվի քերականությունը ոչ միայն հարստացել է նոր կանոններով, այլև բարելավել, կատարելագործել է իր կանոնները այն տեսակետից, որ եթե առաջ միևնույն գրիլ, կարդալ ձևերը միաժամանակ և՛ անորոշ գերբայ էին, և՛ պայմանականի բաղադրիչ, և՛ հրամայականի բաղադրիչ, ապա այժմ այդ նոր ձևերով՝ դրանք տարբերակվել են։

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հնչյունական փոփոխությունները ևս նշանակալից դեր են կատարում լեզվի քերականական կառուցվածքի փոփոխության մեջ, քերականական նոր կանոնների առաջացման, եղած կանոնների բարելավման ու ճշգրտման մեջ։

Թեև մենք առանձին առանձին քննության առանք լեզվի քերականության մեջ կատարվող փոփոխությունների երկու ուղիները, բայց դա, իհարկե, չի նշանակում, թե նրանք լեզվի դարդացման մեջ հանդես են գալիս իրարից անկախ, մեկուսացած կերպով։ Քերականական իմաստների փոփոխությունները և քերականական ձևերի փոփոխությունները մի միասնական պրոցես են կազմում, գործում են միասնաբար և իրարով պայմանավորված։ Դեռ ավելին. նրանք այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ հաճախ դժվար է որոշել, թե տվյալ քերականական փոփոխությունը ո՞ր կարգի է պատկանում։ Այսպես, օրինակ՝ բայի սահմանական, ըզձական և մյուս եղանակների ուրույն ձևերի առաջացումը թեև մենք հատկացրինք երկրորդ կարգի փոփոխություններին՝ քերականական ձևերի փոփոխություններին, բայց նա միաժամանակ պատկանում է նաև առաջին կարգի փոփոխություններին, որովհետև այդ ձևերի առաջացումը, ինչպես և սահմանականի ձևի արտահայտած իմաստի հետագա փոփոխությունը, կապված է եղել ըզձական, պայմանական ու հարկադրական եղանակների՝ որպես ուրույն քերականական իմաստների՝ առաջացման հետ։ Նշանակում է, այդ երկու կարգերի առանձնացումը միայն գիտական արտահայտման արժեք ունի, մինչդեռ իրականում նրանք մի միասնական պրոցեսի տարբեր կողմերն են կազմում։

Մինչև այժմ մենք կանգ առանք միայն այն հարցի վրա, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվում լեզվի քերականական կառուցվածքի մեջ և աեսանք, որ այդ փոփոխությունները, ինչպես ուսուցանում է ընկեր Ստալինը, հանգում են որոշ կանոնների անհետացման, նոր կանոնների առաջացման և եղած կանոնների բարելավման, ճշգրտման ու կատարելագործման։ Այժմ աեսենք, թե ինչ հետևանք են ունենում այդ փոփոխությունները։

Լեզվաբանության մեջ ընդունված է, որ համաբանությունը (անալոգիան) գործում է ոչ միայն հնչյունաբանության, այլև լեզվի քերականության, առանձնապես ձևաբանության մեջ։ Ըստ որում, ինչպես հնչյունաբանության, այնպես էլ քերականության մեջ համաբանությունը հանդիսանում է ոչ միայն ընդհանրություններ ստեղծող, կանոնավորող ու կարգավորող, այլև փայթյոց, կործանող ևրևույթ։ Այդ բանը կարելի է տեսնել յուրաքանչյուր լեզվի դարդացման ամեն մի փուլում։

Վերցնենք օրինակներ ժամանակակից հայերենից։ Հայտնի է, որ իրավ վերջացող գոյականները, իրեն ընդհանուր կանոն, ենթարկվում են ու հոլով-

ման, ինչպես՝ գինի-գինու, այգի-այգու և այլն: Բայց քանի որ ժամանակակից հայերենում ամենից ավելի տարածված է գոյականների ի հոլովումը, ուստի և ի հանգող բառերն էլ համաբանությամբ երբեմն, հատկապես խոսակցության մեջ, ենթարկվում են ի հոլովման, ինչպես՝ այգի-այգիի, գինի-դիսիի և այլն. այդպես են մանավանդ հատուկ անունները, որոնք այժմ արդեն գերազանցապես ի հոլովման են ենթարկվում (Կուրկիի, Թբիլիսիի, Բջնիի և այլն): Կամ -ան, -յան հոլովման բառերը եզակի գործիականում, ըստ կանոնի, պետք է ունենան -ամբ, -յամբ, ինչպես՝ շաբթամբ, արշամբ և այլն, բայց այժմ շատ հաճախ գրական լեզվում էլ ստանում են -ով վերջավորությունը, ինչպես՝ շաբթովով, արշովով և այլն: Այգապիտի բազմաթիվ օրինակներ էլ կարելի է բերել բայերի խոնարհումից, երբ որևէ բայ իր խոնարհման ավանդական ձևերը փոխում է համաբանության շնորհիվ, ինչպես՝ ասացի-ասեցի-ասի, բերի-բերեցի, նստեց-նստավ, տվի-տվեց և այլն:

Ինչո՞ւ է այդպես կատարվում, ինչո՞ւ, օրինակ՝ գործիականի -ով վերջավորությունն է տարածվում, և ոչ-ամբ-յամբ: Այն պատճառով, որ մեր լեզվի զարգացման տվյալ փուլում -ով վերջավորությունը ավելի կենսունակ է, քան նույն հոլովի որևէ մի այլ վերջավորություն: Իսկ լեզվի մեջ որևէ երևույթի կենսունակությունը պայմանավորված է հիմնականում երեք բանով՝ որքան նա շատ է տարածված ու գործածական, որքանով ուժեղ է նրա գիտակցումը խոսող հանրության կողմից, և որքանով է նա ընդունված տվյալ լեզվով խոսող հասարակության կողմից: Այս երեք սեփականություններից եթե րոնենք գործիական հոլովի տարբեր վերջավորությունները, կտեսնենք, որ առավել կամ գուցե միակ կենսունակն է -ով մասնիկը, որովհետև նրանով է կազմվում ժամանակակից հայերենի գոյականների մեծագույն մասի եզակի գործիական հոլովը (բոլոր հոլովումները, բացի -ան, -յան հոլովումից), իսկ հոգնակի գործիականը բացառապես նրանով է կազմվում: Եվ, ահա, իենց այն պատճառով, որ նա առավել կենսունակ է, համաբանությամբ տարածվում է նաև այնպիսի բառերի վրա, որոնք, ըստ կանոնի, չպիտի ստանան ինչ այդ մասնիկը: Ուրեմն՝ համաբանության շնորհիվ կարող են տարածվել այն երևույթները, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում առավել կենսունակ են:

Բայց միայն այդքանը դեռ բավական չէ: Ինչպիսի տեսանք, -ով մասնիկը միանգամայն կենսունակ է և համաբանությամբ տարածվում է նաև -ան, -յան հոլովման բառերի վրա. բայց կարո՞ղ ենք այժմ ասել արդեն, թե այդ հոլովման գործիական հոլովը, որպես ընդհանուր կանոն, կազմվում է -ով վերջավորությամբ: Իհարկե՝ ոչ: Բանն այն է, որ ժամանակակից հայերենում տալիս արշամբ և արշովով, շաբթամբ և շաբթովով ձևերը դեռևս համադրյալից են, դեռևս նրանցից մեկը մյուսին դուրս չի մղել լեզվից ու լիովին բռնել նրա տեղը: Իսկ այդ բանը տեղի է ունենում երկար ժամանակի ընթացքում, երբ տվյալ նոր ձևը տարածվում և ընդհանրանում, կամ գոնե բացարձակ գերակշռություն է ստանում: Այդ՝ շաբթովով, արշովով ձևերը դեռևս ընդհանուր չեն նախ այն պատճառով, որ դրանց զուգընթաց, թեև ավելի առկավ, գործածվում են նաև շաբթամբ, արշամբ ձևերը. մյուս կողմից՝ դրանց հետ ունենք նաև փաշուրյամբ, մեծուրյամբ, վեհուրյամբ և այլ քաղվածքի բառերի -յամբ վերջավորությամբ կազմված ձևերը, որոնք առայժմ ավելի հաճախ են գործածվում, քան փաշուրյանով, մեծուրյանով, վեհուրյանով:

նու՛ր և այլն: Նշանակում է, ալստեղ ևս անհրաժեշտ է նոր ձևի սուսովել հաճախ ու բազմաթիվ բառեր ընդգրկող գործածությունը, նրա տարածումը նմանօրինակ՝ եթե ոչ բոլոր, գոնե գերակշիռ, որակ կազմող դեպքերի վրա: Այդ փոփոխությունը կդառնա ընդհանուր միայն այն ժամանակ, երբ —առ—յան հոլովման գործիականը առավել հաճախացող ու նորանոր բառերի վրա տարածվող գործածությամբ կընդգրկի այդ հոլովման ենթարկվող բառերի մի զգալի մասը և, որ կարևորն է, այդ բառերը մշտապես կստանան միայն —ո՛վ մասնիկը: Իսկ այս նշանակում է, որ համաբանության շնորհիվ աստիճաբար տարածվելով և ստանալով քանակական գերակշռություն նախկին կանոնի նկատմամբ՝ առավել կենսունակ երևույթը հանդես է գալիս իբրև օրինաչափություն նաև այդ բառերի նկատմամբ, բռնում հնի տեղը, դուրս մղում նրան լեզվից:

Մենք ասացինք, որ համաբանությամբ ընդհանրանում են կենսունակ երևույթները: Այս, իհարկե, ընդհանրապես ճիշտ է, բայց բացարձակ սահմանում չէ: Հաճախ է պատահում, որ լեզվի տվյալ փուլում ոչ կենսունակ որևէ քերականական երևույթ հետագայում զարգանում ու տարածվում է համաբանության շնորհիվ և դառնում նոր որակ կազմող կենսունակ երևույթ: Այդ լինում է այն դեպքերում, երբ լեզվի մեջ առաջանում է համապատասխան անհրաժեշտություն: Այսպես է եղել, օրինակ՝ հին հայերենի —եսու, —եեսու (—եհ+եսար) հոգնակերտ մասնիկների հետ: Ինչպես ասացինք, այդ մասնիկները հնում շատ սահմանափակ գործածություն են ունեցել: Բայց երբ է հոգնակերտի դերի փոփոխությունը անհրաժեշտություն է ստեղծել նոր հոգնակերտ մասնիկ օգտագործելու, լեզվի մեջ եղած, բայց սակավ գործածական այդ մասնիկներն են պործածվել և աստիճանաբար տարածվել ու դարձել կենսունակ՝ հենց նույն այդ անհրաժեշտության շնորհիվ: Հետևաբար, այստեղ էլ անհրաժեշտությունն է կենսունակություն տվել սակավ գործածվող, նախկին փուլի համար ոչ կենսական ձևերին, իսկ այդ նշանակում է, թե տվյալ փուլում դրանք էլ արդեն հանդիս են եկել որպես կենսունակ տարրեր:

Ահա, լեզվի մեջ գոյություն ունեցող կենսունակ երևույթներն են, որ կազմում են լեզվի հիմնական տարրերը, այն հիմնական տարրերը, որոնց «ծավալման և կատարելագործման միջոցով» — ինչպես ուսուցանում է Ի. Վ. Ստալինը, — տեղի է ունենում լեզվի զարգացումը:

Այսպիսով, որևէ հիմնական երևույթ, լաստիճանական ծավալումով ու տարածումով, լեզվի մեջ իր կիրառության դեպքերի քանակական կուտակման հետևանքով, վերջապես դառնում է որակ, մինչդեռ հին երևույթը աստիճանաբար իր տեղը զիջելով դրան, դուրս է մղվում լեզվից, մահանում: Համաբանության և ընդհանրացման այս երկու կողմերը մի միասնություն են կազմում: Նորի առաջացումը միաժամանակ հանգեցնում է նաև հնի մահացման կամ դոնե փոփոխման: Ո՞վ մասնիկի տարածումը նշանակում է —ամբ, —յամբ մասնիկների մահացում, ինչպես որ հին հայերենի —ե հոգնակերտի նոր դերով գործածելը՝ իբրև բառակազմական մասնիկ գործածելը, նշանակեց —ե-ի՝ որպես հոգնակերտի մահացում: Հենց այս նկատի ունենալով էլ, լեզվաբաններին շատերը՝ համաբանությունը ճիշտ կերպով կոչում են քերականական առնմանություն և տարնմանություն:

¹ Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, 1930, էջ 299—308:

Ցույց տալու համար, թե ինչպես քանակական փոփոխությունների աստիճանական կուտակման հետևանքով տեղի է ունենում նոր որակի առաջացում լեզվի մեջ և հին որակի մահացում, մենք կանգ առանք միայն մի օրինակի վրա՝ ժամանակակից հայերենի որոշ խումբ կազմող գոյականների դործիական հոլովի կազմության վրա: Բայց չէ՞ որ քերականական մի կանոնի փոփոխությունը, որքան էլ գա մեծ երևույթ լինի, այնուամենայնիվ չի կարող հանգեցնել լեզվի զգալի փոփոխության: Գործիականի -ով մասնիկի տարածումը, իհարկե, որակ կազմող երևույթ կարող է դառնալ, բայց ոչ թե մեր լեզվի ամբողջ քերականական կառուցվածքը փոփոխող: Ոչ էլ նույնիսկ ամբողջ հոլովական սիստեմը փոփոխող երևույթ, այլ միայն գործիական հոլովի կազմության այժմ գոյություն ունեցող կանոնները փոփոխող երևույթ: Իբրև այդպիսին, նա որքան էլ մեծ նշանակություն ունենա գործիական հոլովի կազմության համար, այնուամենայնիվ մեր լեզվի ամբողջ կառուցվածքի համար մի աննշան երևույթ է: Բայց մենք այդ առանձին, լեզվի քերականական ամբողջ կառուցվածքի համար աննշան երևույթը վերցրինք, ցույց տալու համար, թե ինչպես հենց այդ առանձին երևույթի զարգացումն էլ արդյունք է քանակական փոփոխությունների կուտակման: Այժմ, երբ մենք այդ օրինակով կարողացանք իմանալ, թե ինչպես են առաջանում առանձին փոփոխությունները՝ առանձին երևույթների որակական անցումները, կարող ենք անդրադառնալ ամբողջ քերականական կառուցվածքին: Մենք արդեն մի շարք օրինակներ բերեցինք հայոց լեզվի պատմությունից: Այսպես՝ տեսանք, որ Բ հոգնակերտը ժամանակի ընթացքում վերափոխվեց -և, -ս, -վի և այլ մասնիկներով, որոնցից հետագայում մեր ազգային լեզվի մեջ մնացին միայն -ե, -ն (նի + ետ) հոգնակերտները: Սրանով փոխվեց հոգնակի կազմության ամբողջ սիստեմը, որակական անցում տեղի ունեցավ հոգնակի կազմության սիստեմում: Բայց ոչ միայն այդքան. այդ փոփոխությունը մի ամբողջ շարք փոփոխություններ առաջ բերեց հոլովման սիստեմում և առաջին հերթին՝ հոգնակի թվի հոլովման մեջ: Հին հայերենում Բ-ն հոգնակի էր միայն ուղղական և գործիական հոլովների համար, մյուս հոլովների մեջ հոգնակիությունը արտահայտվում էր հենց հոլովական վերջավորությամբ. այսպես, օրինակ՝ ջուրս ձևի մեջ ս-ն և՛ հայցական հոլովի իմաստ է արտահայտում, և՛ հոգնակիության, ջուրզ ձևի մեջ ց-ն՝ և՛ սեռական, տրական ու քացառական հոլովների, և՛ հոգնակիության իմաստ: Մյուս կողմից, Բ-ով հոգնակի կազմելու հետ էր կապված նաև ներքին թեքման ենթակվող բաղաձայնի բառերի հոլովումը հոգնակիում, ինչպես՝ անձն-անձին, դուռն-դուռն և այլն: Արդ, Բ-ը, իբրև հոգնակերտ գործածվելուց դադարելը ինքնին արդեն իր հետ բերում էր նաև այդ ձևերի փոփոխությունը. եթե դուռն ձևից հանենք Բ-ն, ապա կմնա -ուռն մասնիկը, որ ոչ հոլովման վերջավորություն է, ո՛չ էլ հոգնակերտ: Ուստի և չէր կարելի նոր մասնիկով կազմել, ասենք, դուռնվի, այլ պետք էր կազմել՝ դուռ(ն)-վի, դո(ն)վի կամ դուռենք՝ դոռենք և այլն: Ընդհանուր առմամբ էլ հոգնակի գործիականում Բ-ի անհետացումը բերում էր դոռենք-ով ձևը: Սրանցով հոլովական և հոգնակի արտահայտությունների տարբերումը, որ առանց այդ էլ գոյություն ունեւր ուղղական և գործիական հոլովներում (բան-բան, բանի-բանի, տուն-տուն, տաւր-տաւր, գետ-գետ, գետով-գետով և այլն), ավելի քան ուժեղանում է: Եթե տենւք ձևի մեջ հոգնակի մասնիկն է -և, որ ժամանակի ընթացքում համարանությամբ

անցնում է նաև մյուս հոլովներին՝ հոգնակի թվում, ապա դա ինքնին հանգեցնում է այն բանին, որ հոգնակի թվի վերջավորությունները (ս, ց) զրկվում են թվի իմաստից և դառնում են լուկ հոլովական իմաստ արտահայտող վերջավորություններ (տներս, տներաց կամ տներից և այլն)։ Բայց հենց դրանով էլ սկիզբ է առնում մի նոր երևույթ. եթե դրանք միայն հոլովական մասնիկներ են, ինչու պետք է եզակիում ու հոգնակիում տարբեր լինեն. ինչու, օրինակ, եզակի սեռականում պետք է ասել զեղոյ, իսկ հոգնակիում զեղերոց կամ զեղերց, երբ - երբ հոգնակի թիվն է ցույց տալիս, իսկ -ոյ-ը՝ արդեն բավական է սեռական հոլովի իմաստն արտահայտելու համար, մանավանդ, որ այդ զեղերոց ձևը ավելի շփոթ է առաջացնում, քանի որ նա միաժամանակ և՛ սեռականի, և՛ տրականի, և՛ բացառականի ձև է։

Ահա այստեղից էլ սկսվում է եզակի և հոգնակի թվերում հոլովական վերջավորությունների նույնացումը. եզակի սեռականի և տրականի վերջավորությունը (ի, ա, ո, ու) դառնում է նաև հոգնակի թվի սեռականի ու տրականի վերջավորություն, ց-ն մնում է բացառականին, անցնելով նաև եզակիին, իսկ եզակիի է-ն էլ անցնում է հոգնակիին, որով և առաջ են գալիս բացառականի երկու վերջավորությունը՝ է և ից (ուց, աց և այլն), ինչպես՝ Բաղաբից կամ Բաղաբէն, Բաղաբներից կամ Բաղաբներէն։ Այս ձևերից առաջինը տարածվում և ընդհանրանում է ու՝ ճյուղի բարբառներում, որոնցից էլ անցնում է ժամանակակից հայերենին, իսկ երկրորդը՝ կը ճյուղի բարբառներում (էլ և ս ճյուղի բարբառների մեջ երկուսն էլ կան)։

Ինչպես տեսնում ենք, հոգնակիի կազմության մեջ կատարված փոփոխությունը, թեև ինքնին վերցրած շատ մեծ երևույթ չէ, բայց առաջ է բերում նորանոր փոփոխություններ, որոնք հանգում են ամբողջ հոլովական սիստեմի փոփոխության, առաջ են բերում որակական անցում հայոց լեզվի հոլովական սիստեմի մեջ։ Սակայն այս էլ, թեև շատ մեծ փոփոխություն է լեզվի ձևաբանության մեջ, դեռևս չի նշանակում լեզվի մի որակական վիճակից մի նոր որակական վիճակի անցում։ Այդպիսի անցման համար անհրաժեշտ էին բանական կուտակումներ լեզվի նաև ալ մասերում. նվ այդ կուտակումները կատարվում են։

Վերը մենք արդեն հիշեցինք բայի խոնարհման մեջ կատարված մի քանի փոփոխություններ, որոնց արդյունքն է եղել բայական նոր եղանակների (բղձական, պայմանական և այլն) առաջացումը, իսկ հենց դրանով ղգալի փոփոխություն է կրել բայի խոնարհման ամբողջ սիստեմը. հատկապես խոնարհականի նոր ձևերի (զբում եմ, կարգում եմ և այլն) առաջացումը մեծապես զարկ է տալիս զրաբարում արդեն գոյություն ունեցող բաղադրյալ բայական ձևերի կազմության սիստեմին, որը հսկայական փոփոխություն է առաջացնում բայի խոնարհման մեջ։ Այսպիսով՝ գոյականների հոլովման և բայերի խոնարհման հին հարկերին հատուկ սիստեմների մեջ ժամանակի ընթացքում, աննկատելի բանական փոփոխությունների կուտակման հետևանքով, տեղի է ունենում որակական անցում։ Այդ բանական կուտակումների հետևանքով առաջանում ու զարգանում են նոր հայերենին հատուկ հոլովման և խոնարհման սիստեմները. իսկ այդ նշանակում է, թե որակական անցում էր կատարվել ամբողջ ձևաբանության մեջ, որովհետև հոլովումն ու խոնարհումը հենց ձևաբանության հիմքն են կազմում, մանավանդ, որ հոլովման սիստեմում կատարված փոփոխություններն ընդգրկում են ոչ միայն

դոյականները, այլև թվականներն ու դերանունները, ինչպես և ածականները:

Սակայն այդ էլ դեռ բոլորը չէ: Լեզվի քերականությունը նրա ձևաբանությունն ու շարահյուսությունն է: Քերականական կառուցվածքի հին որակից նոր որակի անցնելն արտահայտվում է ոչ միայն նրա ձևաբանության, այլև շարահյուսության փոփոխություններով: Ի՞նչ, իսկապես, հայերենում էլ տեղի է եղել ժամանակի ընթացքում հիմնովին փոխվել է մեր լեզվի շարահյուսությունը: Ի՞նչ հին հայերենում ավելի սովորական ու կանոնավոր ձև էր որոշիչի և հատկացուցիչի հետադաս գործածությունը (ինչպես՝ տունն իմ իմ տունը), այս Բայց «քաջ մարդ» և այլն), ապա ժամանակի ընթացքում այդ պատվորությունը շրջվում է, մի բան, որ նույնպես տեղի է ունենում երկար դարերի ընթացքում, աննկատելի ու աստիճանական տարածման ու ընդհանրացման միջոցով: Արդեն հինգերորդ դարում և նույնիսկ նրանից էլ առաջ նկատելի են այդ երևույթի զգալի տարրերը: Նախագրային շրջանի անգիր բանահյուսության մեջ արդեն ունենք հուր և եր, խաբտեաշ պատանեկիկ, գկաւմբիկն եղեգնիկ, եղեգան փող և այլ կապակցություններ, որոնց մեջ որոշիչներն ու հատկացուցիչները նախադաս են: Հինգերորդ դարի մատենագրության մեջ թեև գերակշռում է ետադաս գործածությունը, բայց զգալի է նաև նախադաս գործածությունը: Ահա այս երևույթը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի ծավալվում է, ընդհանրանում և առաջ բերում շարահյուսության շրջումը:

Այնուհետև, հին հայերենի կարևոր երևույթներից է նաև ածականի համաձայնեցումը գոյականին՝ թվով և հոլովով, ինչպես՝ արեւ տնուանի՛մ «անվանի մարդիկ», տիկնայլ փափկասունմ «փափկասուն տիկիներ» և այլն: Սակայն հենց հինգերորդ դարի մատենագրության մեջ էլ այդ համաձայնեցումը բացարձակ կանոն չէ: Ընդունված է ասել, թե ետադաս լինելու դեպքում՝ ոչ, թեև այս ընդհանուր կանոններն էլ բազմաթիվ խախտումներ ունեն նույնիսկ աշխարհի հեղինակների մոտ. ինչպիսիք են Եզնիկը, Կորյունը, Փավստոսը, Աղաթանգեղոսը և այլն: Այդ կանոնը, որի խախտման առաջին սաղմերն սկիզբ են առել համանարար քերականական սեռի կորուստի պատճառով՝ դեռևս հինգերորդ դարից շատ առաջ, ավելի ևս խախտւում է դառնում շարահյուսության շրջման հետևանքով, մինչև որ վերջապես բոլորովին վերանում է:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, զգալի սրտի կազմող փոփոխություններ են տեղի ունեցել նաև մեր լեզվի շարահյուսության մեջ, մանավանդ, եթե իմի հավաքենք նաև խնդրառության, նախադասության կառուցման, համաձայնության մեջ կատարված փոփոխությունները ևս: Նշանակում է, երկար դարերի ընթացքում, առաջադրած փոփոխությունների աստիճանական կուտակումների հետևանքով, քերականական նոր կանոնների առաջացման ու զարգացման, գոյություն ունեցող հիմնական կանոնների մշակման ու կատարելագործման և որոշ հին կանոնների մահացման միջոցով տեղի է ունեցել մեր լեզվի քերականական կառուցվածքի փոփոխությունը, նրա անցումը հին որակից նոր որակի:

Սակայն երբ խոսում ենք ամբողջ լեզվի մասին, նրա քերականական կառուցվածքի փոփոխությունը դեռ ամեն ինչ չէ: Դրա հետ միասին և դրանից էլ պարզ փոփոխվում է նրա բառային կազմը, ինչպես և բառային հիմնական

ֆոնդը, որը թեև բառային կազմի համեմատությամբ շատ ավելի դանդաղ է փոփոխությունների ենթարկվում, բայց և այնպես ենթարկվում է:

Ամենաթեթևակի համեմատությունն ունդամ բավական է, տեսնելու համար, թե ինչ մեծ փոփոխություններ են կատարվել մեր լեզվի բառային կազմի մեջ 5-րդ դարից մինչև այժմ: Մեր լեզվից դուրս են եկել հարյուրավոր բառեր, ավելացել են հազարավոր բառեր, բազմաթիվ բառեր փոխել են իրենց լմաստները: Փոփոխություն են կրել նաև բառակազմական կանոններն ու միջոցները, շատ մասնիկներ կորցրել են իրենց կենսունակությունը և այլևս չեն պարծածվում նոր բառեր կազմելու համար, առաջացել են նոր մասնիկներ և այլն: Վերջապես այս բոլորին ավելանում են նաև հնչյունական փոփոխությունները, ինչպես՝ երկրորդականների վերածվելը պարզ ձայնավորի կամ ձայնավորի ու բաղաձայնի, Վ և Ֆ հնչյունների առաջացումը և այլն, որոնք զգալի փոփոխություններ են մտցրել մեր լեզվի հնչյունական համակարգի մեջ:

Այս բոլորն, ահա, միասին վերցրած, առաջ են բերել մեր լեզվի անցումը հին որակից նոր որակի: Հոգնակի թվի կազմության, հոլովման, խոնարհման, շարադասության, համաձայնության, խնդրառության, բառային կազմի ու բառային հիմնական ֆոնդի, բառակազմության, հնչյունաբանության մեջ կատարված աստիճանական փոփոխությունների կուտակումը ժամանակի ընթացքում հասցրել է մեր լեզվի որակական անցմանը: Այդ փոփոխություններից յուրաքանչյուրը, ինչպես տեսանք, ինքն էլ երկարատև ժամանակաշրջանում կուտակվող քանակական փոփոխությունների արդյունք է, բայց նրանցից ոչ մեկն էլ, որքան էլ մեծ նշանակություն ունենա լեզվի մեջ, առանձին վերցրած չի կարող լեզուն հանգեցնել որակական անցման: Այդ փոփոխություններից յուրաքանչյուրը նոր որակի մի տարրն է, որ սաղմնավորվում ու զարգանում է, դուրս մղելով հին որակի որևէ տարրը, բայց այդ առանձին տարրերի առաջացումը կամ մահացումը դեռևս լեզվի որակական նոր վիճակ չի ստեղծում: Միայն այդպիսի տարրերի կուտակումը, լեզվի քերականության ու բառային հիմնական ֆոնդի, ինչպես և հնչյունական համակարգի մեջ տեղի ունեցող մի ամբողջ շարք փոփոխությունների կուտակումն է, որ տալիս է լեզվի որակական նոր վիճակ, առաջ բերում անցում լեզվի մի որակից՝ մի նոր որակի: Այսպիսով, առանձին փոփոխություններ, կատարվելով ֆանակական փոփոխությունների կուտակումով և դրա հետևանքով ուրակ դառնալով, լեզվի ամբողջությամբ մեջ իրենից ուրակ են հանդիս գալիս, և այդ առանձին ֆանակների կուտակումն է, նրանց ամբողջությունը, որ լեզվի մեջ որակական անցումներ է առաջացնում:

Լեզվի մեջ տեղի ունեցող այդ փոփոխությունները կատարվում են հասարակության կողմից, հենց հաղորդակցման պրոցեսում: Լեզուն, ինչպես ցույց է տալիս ընկեր Ստալինը, «ծնվում ու զարգանում է հասարակության ծննդի ու զարգացման հետ միասին», իսկ այդ նշանակում է, թե լեզվի մեջ տեղի ունեցող այդ փոփոխությունները չի կարելի կտրել հասարակությունից: Անշուշտ, չի կարելի կարծել, թե հասարակությունը որոշ դիտավորությամբ ու կանխորոշ ուղղությամբ փոխում է լեզվի քերականական կառուցվածքը: Մեղանից ոչ ոք նախապես չի որոշել, որ այս ինչ կամ այն ինչ փոփոխությունը մտցնի լեզվի մեջ. մեր հասարակությունը որոշակի դիտավորությամբ չէ, որ շարժումով, արյունով ձևերը աստիճանաբար ավելի հաճախ է գործա-

ծում, քան շարժմամբ, արյամբ և այլն ձևերը: Այս փոփոխությունները կատարվում են լեզվի մեջ հասարակության կամքից անկախ, հաճախ սկզբնապես առանց նույնիսկ հասարակության կողմից պիտակցվելու:

Ո՞րն է, ուրեմն, այդ փոփոխությունների առաջացման հասարակական կողմը, և ի՞նչ դեր ունի հասարակությունն այդ փոփոխությունների առաջացման մեջ: Ամենից առաջ այն, որ այդ փոփոխությունների առաջացումը արդյունք է հասարակության մեջ, նրա հաղորդակցման պրոցեսում ստեղծված անհրաժեշտության: Հասարակության մտածողության զարգացման զուգընթաց առաջանում են նորանոր տրամաբանական կատեգորիաներ, որոնց արտահայտման համար հասարակությունը կարիք է զգում համապատասխան միջոցների: Այսպես, օրինակ՝ գոյականների անձի և իրի առումների տրամաբանական կատեգորիայի առաջացումը անհրաժեշտություն է առաջ բերում այդ կատեգորիան արտահայտելու համար միջոց ստեղծել: Եվ այդ անհրաժեշտության հետևանքն է քերականական այն կանոնների առաջացումը, որոնց մասին վերը խոսել ենք: Այնուհետև, հասարակությունը կանխորոշած ձևով չի փոխում քերականական երևույթները, — այդ ճիշտ է, — բայց այնուամենայնիվ կատարում է ինքը, և լեզվի մեջ կատարվող այն փոփոխություններն են հաստատվում, որոնք կատարվում են ամբողջ հասարակության կամ գոնե նրա մեծագույն մասի կողմից: Ուստի և հասարակությունն է, որ ինչպես անհրաժեշտություն է առաջ բերում քերականական կանոնների կատարելագործման, բարելավման և նոր կանոնների ստեղծման, այնպես էլ բավարարում է այդ անհրաժեշտությունը, բարելավում, կատարելագործում ու մշակում է քերականությունը և հարստացնում այն նոր կանոններով, ինչն ու կանխորոշված միջամտությամբ:

Ինչ վերաբերում է լեզվի զարգացման ներքին օրենքներին, ապա դա հենց տարերայնորեն, լեզվի իր իսկ առանձնահատկություններին համապատասխան կատարվող փոփոխություններն են, որոնք թեն առաջանում են հասարակական հաղորդակցման պրոցեսում ստեղծված անհրաժեշտության հետևանքով և կատարվում են հասարակություն կողմից՝ հաղորդակցման պրոցեսում իսկ, բայց կատարվում են լեզվի ներքին, սեփական օրինաչափություններով: Այսպես, օրինակ՝ նույն քերականական իմաստը կարող է տալ չանալ տարբեր լեզուներում, հետևաբար անհրաժեշտություն կառաջանա այդ իմաստն արտահայտելու միջոց, քերականական ձև ստեղծելու: Տարբեր լեզուներն այդ ձևը կստեղծեն ժամանակի ընթացքում, բայց նրանցից յուրաքանչյուրը կստեղծի այդ ձևը իր քերականական կառուցվածքին համապատասխան, կստեղծի իր ներքին օրենքներին համապատասխանող քերականական միջոցը: Օրինակ՝ ժամանակակից հայերենի գոյականների անձի և իրի առման քերականական իմաստին, ինչպես գիտենք, մոտավորապես համապատասխանում է ռուսերենում շնչավորի և անշունչի քերականական իմաստը. արդ՝ թե՛ հայերենը, թե՛ ռուսերենը ստեղծել են այդ իմաստի քերականական արտահայտությունը՝ հայցական հոլովի յուրահատուկ ձևավորմամբ, բայց եթե հայերենի անձի առումը արտահայտելու համար հայցականը ձևավորում է տրական հոլովի ձևով, ապա ռուսերենը ձևավորում է սեռականի ձևով (արական սեռի բառերը): Կամ՝ վերը բերած օրինակներից՝ հոգնակիի կազմության, ըղձական եղանակի կազմության, ինչպես և այլ քերականական իմաստների արտահայտության համար հայերենն ստեղծել է իր

քերականական կառուցվածքին համապատասխանող ձևերն ու միջոցները, ինչպես մի ուրիշ լեզու, իր ներքին օրենքներին համապատասխան, կարող էլ ստեղծել բոլորովին այլ միջոցներ։ Ուրեմն, առաջ դալով հաղորդակցման պրոցեսում ստեղծված հասարակական անհրաժեշտության թելադրանքով, այդ փոփոխությունները կատարվում են յուրաքանչյուր լեզվում այդ լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների համաձայն։ Որանով է բացատրվում ինչ այն երևույթը, որ մի լեզվում, ասենք ժամանակի ընթացքում սկսված ինչպես փոփոխությունները հասցնում են, օրինակ, երկբարբառների վերացմանը (ինչպես հայերենում), մի այլ լեզվում՝ ոչ (ինչպես ֆրանսերենում)։ Վամ հոլովման սխառեմում կատարվող փոփոխությունները հանգցնում են գոյականների՝ վերջավորություններով հոլովման անհետացմանն ու հոլովական իմաստներն օժանդակ բառերով արտահայտելուն (ինչպես ժամանակակից ֆրանսերենում և անգլերենում), իսկ մի ուրիշ լեզվում՝ հին վերջավորությունների կորուստով ստեղծվում են նոր վերջավորություններ (ինչպես՝ ժամանակակից հայերենում)։ Այս բոլորը պայմանավորված են յուրաքանչյուր լեզվի իր իսկ ներքին օրենքներով և բնութագրում են նրա զարգացման առանձնահատուկ տենդենցները, իսկ այդ առանձնահատուկը, ինքնին հասկանալի է, ոչ այլ ինչ է, եթե ոչ համընդհանուրի, լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունների կոնկրետ դրսևորում՝ կոնկրետ լեզուներում և կոնկրետ պատմական ժամանակաշրջանում։

Վերջապես, լեզվի զարգացման այդ ընդհանուր օրինաչափություններն էլ, իրենց հերթին, ոչ այլ ինչ են, եթե ոչ դիալեկտիկական զարգացման ընդհանուր օրենքների դրսևորումը լեզվի մեջ, նրա զարգացման պրոցեսի մեջ։ Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը երևույթները դիտում է նրանց հիմնադարձ կապի և միասնության մեջ, և ոչ իրարից կտրված, որպես առանձին, ինքնաբավ կատեգորիաներ։ Առաջնորդվելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդի այս դրույթով, մենք տեսնում ենք, որ լեզվի մեջ ևս երևույթների այդ փոխադարձ անխզելի կապը գոյություն ունի, որ լեզվի զարգացման մեջ էլ այս կամ այն երևույթը մեկուսացած կերպով հանդես չի գալիս, այլ շաղկապված է մի շարք այլ երևույթների հետ։ Վերը բերված օրինակները՝ հնչյունների փոփոխության, հոգնակիի կազմության ու հոլովման սխառեմի փոփոխման վերաբերյալ՝ դրա կոնկրետ արտահայտությունն են։

Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը դիտում է երևույթները ոչ ինքնաշարժության մեջ, մեկ ընդմիջող հաստատված, անփոփոխ վիճակի մեջ, այլ անընդհատ շարժման ու զարգացման պրոցեսի մեջ։ Առաջնորդվելով այս սկզբունքով, մենք տեսնում ենք, որ լեզուն ևս մեկ ընդմիջող հաստատված, անփոփոխ վիճակի մեջ չի գտնվում. նա, ինչպես բոլոր երևույթները, անընդհատ փոփոխվում ու զարգանում է։ Վերը բերված այն օրինակները, որոնք վերաբերում են լեզվի մեջ կատարվող աստիճանական փոփոխություններին, դիալեկտիկայի այդ օրենքի դրսևորումն են լեզվի մեջ։ Ըստ որում, ինչպես բոլոր երևույթների, այնպես էլ լեզվի մեջ շարժումը, զարգացումը տեղի է ունենում վերընթաց գծով, ստորին վիճակից դեպի ավելի բարձր զարգանալու ուղղությամբ, կատարելագործվելու, հարստանալու և մշակվելու ճանապարհով։

Մարքսիստական դիալեկտիկական մեթոդը զարգացումը «...դիտում է ոչ թե որպես աճման պարզ պրոցես, որտեղ քանակական փոփոխություննե-

րը չեն հասցնում որակական փոփոխությունների, այլ որպես այնպիսի զարգացում, որն աննշան և թաքնված քանակական փոփոխություններից անցնում է բացահայտ փոփոխությունների, արմատական փոփոխությունների, որակական փոփոխությունների...»¹։ Առաջնորդվելով մարքսիստական-դիալեկտիկական մեթոդի այս սկզբունքով, մենք տեսնում ենք, որ լեզվի մեջ էլ նախապես աննշան ու թաքնված փոփոխություններն լատիստանաբար ծավալվում ու կուտակվում են և հանգեցնում որակական անցման՝ լեզվի մեջ։

Մարքսիստական «...դիալեկտիկական ելնում է այն բանից, որ բնության առարկաներին,՝ բնության երևույթներին հատուկ են ներքին հակասություններ, որովհետև դրանք բոլորն էլ ունեն իրենց բացասական ու դրական կողմը, իրենց անցյալը և ապագան, իրենց մահացողն ու զարգացողը, որ այդ հակադրությունների պայքարը, հնի և նորի, մահացողի և ծնվողի, իր դարն անցկացողի և զարգացողի միջև մղվող պայքարը կազմում է զարգացման պրոցեսի ներքին բովանդակությունը, քանակական փոփոխությունները որակական փոփոխությունների վերածվելու ներքին բովանդակությունը»²։

Առաջնորդվելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդի այս սկզբունքով, մենք տեսնում ենք, որ հակասությունների պայքարը, հնի ու նորի, մեռնողի ու զարգացողի միջև մղվող պայքարը լեզվի ներքին զարգացման բովանդակությունն է կազմում։ Որինակ՝ դրաբարի զարգացման պրոցեսում հոգնակիի կազմության վերը հիշված նոր ձևերի և հնի՝ Ի-ով հոգնակիի միջև եղած պայքարը, կամ խոնարհման սիստեմում առաջացած նոր ձևերի ու հնի միջև եղած պայքարը, կամ, վերջապես, արդի հայերենից բերված՝ -ան, -յան հոլովման դործիական հոլովի կազմության նոր ձևի (-ով վերջավորության) և հնի միջև եղած պայքարը մեր լեզվի քերականության զարգացման, կատարելագործման, մշակման ու հարստացման ներքին պրոցեսի բովանդակությունն է կազմում։ Ըստ որում, շատ հաճախ լեզվի մեջ հանդես եկող նոր ձևերին կարող է նոր չլինել ընդհանրապես, բայց նրա տարածումը և ընդհանրացումը կարող է հանդես գալ իբրև նոր երևույթ, այդպես է, օրինակ՝ -ով վերջավորությունը, որ շատ հին ժամանակներից գոյություն ունի հայոց լեզվում, բայց նրա տարածումը -ան, -յան հոլովման բառերի վրա նոր երևույթ է։

Հանճարեղ կերպով կիրառելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդը լեզվի զարգացման նկատմամբ, ընկեր Ստալինը ցույց տվեց, որ լեզվի մեջ որակական անցումները տեղի են ունենում ոչ թե հանկարծական պայթյունների միջոցով, «...այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»³։ Առաջնորդվելով ստալինյան այդ հստակ դրույթով, մենք տեսնում ենք, որ նոր որակի տարրերի կուտակումն ու ծավալումը չի հանգեցնում գոյություն ունեցող լեզվի ոչնչացման, այլ միայն նրա անցմանը՝ որակական մի վիճակից մի նոր վիճակի, որ, օրինակ, հայերենի մեջ երկար դարերի ընթացքում կատարված փոփոխությունները, նրանց ծավալումն ու կուտակումը և հին որակի տարրերի մահացումը չեն հանդեգրել հին հայերենի ոչնչացմանը, այլ նրա անցմանը՝ նոր որակական վիճա-

¹ Համի(ր)Պ պատմություն, Երևան, 1950, էջ 143։

² Նույն տեղում, էջ 143, 146։

³ Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 61։

կիւ Մյուս կողմից ստալինյան այդ հանճարեղ լուսարանութիւնը ցույց է տալիս, որ լեզվի զարգացումը լոկ քանակական աճ չէ, լոկ ձևափոխութիւնների մեխանիկական գումար չէ, ինչպես քարոզում է բուրժուական ռեակցիոն վուլգար-էվոլուցիոնիզմը, այլ լեզվի մեջ տեղի ունեցող որակական անցումների պատմական պրոցես:

* * *

Մեր հոգւածի մեջ մենք փորձեցինք ընդհանուր գծերով նկարագրել լեզվի մեջ տեղի ունեցող որակական անցումների պատմական ընթացքը՝ հայոց լեզվի տվյալներով, հիմնականում կանգ առնելով քերականութիւն, հստակապէս ձևաբանութեան վրա: Անշուշտ, լեզվի զարգացումը, նրա որակական անցումների պրոցեսն ամբողջութեամբ հասկանալու համար բավական չէ միայն քերականութիւնը. այդպիսի ամբողջական գտղափար կազմելու համար անհրաժեշտ է նույնպիսի քննութեան ենթարկել ոչ միայն բառային կազմն ու բառային հիմնական ֆոնդը և հնչյունաբանութիւնը, այլև՝ լեզվի զարգացման պատմական ընթացքը՝ նրանով խոսող ժողովրդի պատմութեան հիման վրա. լեզվի ճշուղավորումների պատմական պրոցեսը, տվյալ լեզվի և ուրիշ լեզուների միջև եղած պատմական կապերն ու փոխադարձ ազդեցութիւնները. որոնք փոքր դեր չեն խաղում լեզվի զարգացման պրոցեսում: Միայն այսպիսի բազմակողմանի ուսումնասիրութիւնը հնարավորութիւն կտա լուստւանել լեզվի զարգացման պատմական պրոցեսն իր բոլոր կողմերով:

Մասնավորելով խոսքը հայերենի նկատմամբ, հարկ ենք համարում նշել, որ այդպիսի բազմակողմանի ուսումնասիրութիւններով միայն հնարավոր կլինի ճիշտ կերպով լուսաբանել հայոց լեզվի պատմութիւնը իր ամբողջութեան մեջ:

Ստալինյան լեզվաբանական ուսմունքը այդպիսի ուսումնասիրութիւնների տեսական հաստատուն հիմունքն է. մնում է, որ հայագետներս, առաջնորդվելով ստալինյան լեզվաբանական ուսմունքի հանճարեղ դրույթներով, ստեղծենք այդ ուսմունքին արժանի մենագրութիւններ՝ հայոց լեզվի պատմութեան ու տեսութեան վերաբերյալ: